Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 9

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2024-2025 ուս. տարվա

գիտական խորհրդի նիստի

ք.Երևան 09 հունիսի 2025թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 20 անդամներից 15–ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ԺԵ.00.01 – «Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Լուսինե Գագիկի Նազարյանի «Դեղագործական հոգածության բարելավման հնարավոր ուղիների մշակումը փորլուծության ախտանիշի դեպքում» թեմայով ատենախոսության վերաբերյալ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, պաշտոնական կարծիքի քննարկում և հաստատում:
   Զեկուցող՝ Լուսինե Նազարյան
   Ղեկավար՝ դ.գ.թ., դոցենտ. Մ.Հ. Սիմոնյան
2. ԺԵ.00.01 – «Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Անուշ Բարսեղի Բարսեղյանի «Վերին շնչուղիների սուր ռեսպիրատոր վարակների և գլխացավի ախտանիշի ինքնաբուժման համուղղումը դեղատանը» թեմայով ատենախոսության վերաբերյալ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, պաշտոնական կարծիքի քննարկում և հաստատում:
   Զեկուցող՝ Անուշ Բարսեղյան
   Ղեկավար՝ դ.գ.թ., դոցենտ. Մ.Հ. Սիմոնյան
3. Ֆարմացիայի ինստիտուտի 2024-2025 ուս. տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվության քննարկման և հաստատման հարցը: **Զեկուցող՝ Ա. Մկրտչյան**
4. **Ընթացիկ հարցեր:**
   4.1. Ֆարմացիայի ինստիտուտի կրթական ծրագրերի ղեկավարների հաշվետվությունների քննարկման և հաստատման հարցը:
   Զեկուցողներ՝
   - «Ֆարմացիա» բակալավրի և «Դեղերի որակի վերահսկում» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավար Հ. Սիմոնյան
   - «Ֆարմացիա» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավար Ա. Հովհաննիսյան

- «Դեղագործական քիմիա» բակալավրի (հեռակա ուսուցում) կրթական ծրագրի ղեկավար Ա. Գեոլչանյան

1. **ԺԵ.00.01 – «Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Լուսինե Գագիկի Նազարյանի «Դեղագործական հոգածության բարելավման հնարավոր ուղիների մշակումը փորլուծության ախտանիշի դեպքում» թեմայով ատենախոսության վերաբերյալ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, պաշտոնական կարծիքի քննարկում և հաստատում:**

Լսեցին՝ Լուսինե Նազարյանին, ով մանրամասն ներկայացրեց ատենախոսական աշխատանքը և պատասխանեց հարցերին:

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի նախագահ Ա. Մկրտչյանը, անդամներ՝ ակադեմիկոս Ա. Սաղյանը, կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանը, ք.գ.թ. Խ. Հակոբյանը, ք.գ.թ. Ա. Ծատուրյանը, դ.գ.թ. Լ. Սահակյանը, ովքեր շնորհակալություն հայտնեցին ատենախոսին հետաքրքիր, բովանդակալից զեկուցման համար, ուղղեցին իրենց հարցերը և նշեցին դիտողությունները.

1. Արդյո՞ք ՀՀ-ում չկան ստանդարտ ուղեցույցներ և ալգորիթմը կազմելուց արվե՞լ է համեմատական վերլուծություն այլ երկրների հետ:
2. Նման ուղեցույցները հասանելի են բժիշկներին, ի՞նչ կարիք կա, որ դեղատան աշխատակիցը ևս ունենա նման ալգորիթմներ կամ ուղեցույցներ:

Հարցերին պատասխանելու համար ձայնը տրվեց հայցորդին:

Պատասխան՝ Հայցորդ Լուսինե Նազարյանը նշեց, որ այս ախտանիշի համար չկա ներդրված որևէ ալգորիթմ և ըստ ԱՀԿ-ի դեղատան աշխատակիցը կարող է տրամադրել խորհրդատվություն՝ առանց դեղատոմսի բաց թողնվող դեղերի դեպքում, ուստի նման ալգորիթմները միայն կարող են օգնել պացիենտներին ճիշտ ուղղորդելու հարցում:

Ելույթի համար Ա. Մկրտչյանը ձայնը տվեց նաև գրախոս, դ.գ.թ. Ա. Սահակյանին, ով ներկայացրեց Ֆարմացիայի ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, պաշտոնական կարծիքի նախագիծը:

Ա. Սահակյանը նշեց, որ Լուսինե Գագիկի Նազարյանի ատենախոսական աշխատանքը նվիրված է փորլուծության ախտանիշի դեպքում դեղագործական հոգածության բարելավման հնարավոր ուղիների մշակմանը:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Դեղագործական հոգածության գործընթացն աշխարհի շատ երկրներում անընդհատ բարելավման կարիք ունեցող հիմնախնդիր է: Աշխատանքի գիտական նորույթն այն է, որ ուսումնասիրության շրջանակներում ապացուցվել է փորլուծության դեպքում կիրառվող ԱԴՏ դեղերի խորհրդատվության ժամանակ անհրաժեշտ տեղեկատվության ստանդարտացման և դեղագործական հոգածության տեղեկատվական թերթիկի և ալգորիթմի կիրառման անհրաժեշտությունը:

Մասնավորապես հեղինակն առաջարկում է.

- Ստեղծել սպառողների համար նախատեսված առցանց տեղեկատվական հարթակ՝ ապահովելու դեղերի վերաբերյալ հստակ և մատչելի տեղեկատվություն:

- Ներդնել պատշաճ դեղատնային գործունեության պահանջները ՀՀ-ում՝ բարձրացնելու դեղագործական խորհրդատվության որակը և ապահովելու դեղերի ռացիոնալ օգտագործումը:
- Մշակել դեղագործական հոգածության հայեցակարգը ՀՀ-ում՝ հաշվի առնելով դեղատնային ծառայությունների բարելավման և բուժառուների առողջության պահպանման պահանջները:
- Ներդնել օրենսդրական կարգավորում, որի համաձայն յուրաքանչյուր դեղատանը պարտադիր կլինի աշխատել առնվազն մեկ բարձրագույն կրթությամբ դեղագետ մասնագետ, ինչպես նաև սահմանել դեղագետի և դեղագործի դերերի և պարտականությունների հստակ տարբերակումը՝ ապահովելու մասնագիտական պարտականությունների արդյունավետ բաշխումը և դեղատնային ծառայությունների բարձր որակը:

Ա. Սահակյանը նշեց, որ ատենախոսության վերաբերյալ ունի նաև որոշ դիտողություններ.

1. Աղյուսակ 2-ում, նկարներ 2-ում և 7-ում ԵՊԲՀ-ի և ԵՊՀ-ի շրջանավարտ-դեղագետների պատասխանները առանձնացված են, որի կարիքը չկար՝ դրանք բարձրագույն կրթության մասնագետներներ են:
2. Արդյո՞ք Ավետիս Դոնաբեդյանի մոդելը լիարժե՞ք էր դեղագործական հոգածության գնահատման համար: Ինչու՞ ընտրեցիք հենց այդ մոդելն՝ ի տարբերություն այլ հնարավոր մոտեցումների:
3. Ներդիր թերթիկը հավաստի տեղեկատվական աղբյուր է, որից կարող են օգտվել նաև դեղագետներն ու դեղագործները (էջ 76), մինչդեռ նշվում է, որ այն չի հանդիսանում տեղեկատվական աղբյուր դեղատան աշխատակիցների համար:
4. Հեղինակն աշխատանքում, մասնավորապես 3.3 բաժնում, մանրամասնորեն նկարագրում է տեղեկատվական թերթիկի և ալգորիթմի ներդրումը դեղատնային կազմակերպություններում՝ պիլոտային ծրագրի շրջանակներում, սակայն չի նշվում փորձարկման տևողությունը:
5. Աշխատանքը զերծ չէ նաև որոշ տպագրական թերություններից ու վրիպակներից:

Նա հավելեց, որ արված դիտողություններն ամենևին չեն նսեմացնում Լուսինե Նազարյանի կողմից ներկայացված ատենախոսության արժեքը: Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված հոդվածները լիովին արտացոլում են աշխատանքի բովանդակությունը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ ատենախոսությունն արդիական է, ունի տեսական և գործնական նշանակություն: Այն իր ծավալով և բովանդակությամբ լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հայցորդ Լուսինե Գագիկի Նազարյանն արժանի է ԺԵ.00.01 – «Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

2. **ԺԵ.00.01 – «Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Անուշ Բարսեղի Բարսեղյանի «Վերին շնչուղիների սուր ռեսպիրատոր վարակների և գլխացավի ախտանիշի ինքնաբուժման համուղղումը դեղատանը» թեմայով ատենախոսության վերաբերյալ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի՝ որպես**

առաջատար կազմակերպության, պաշտոնական կարծիքի քննարկում և հաստատում:

Լսեցին՝ Անուշ Բարսեղյանին, ով մանրամասն ներկայացրեց ատենախոսական աշխատանքը և պատասխանեց հարցերին:

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի նախագահ Ա. Մկրտչյանը, անդամներ՝ ք.գ.թ. Խ. Հակոբյանը, ք.գ.թ. Ա. Ծատուրյանը, դ.գ.թ. Լ. Սահակյանը, ովքեր շնորհակալություն հայտնեցին ատենախոսին զեկուցման համար, ուղղեցին իրենց հարցերը և նշեցին դիտողությունները.

1. Որքա՞ն է տևել ուղեցույցի կազմման հետազոտական փուլը և ո՞րն է ատենախոսության վերջնական նպատակը:
2. Քանի՞ հոգի է մասնակցել հարցումներին և ինչպե՞ս է կատարվել հարցմանը մասնակիցների ընտրությունը:

Հարցերին պատասխանելու համար ձայնը տրվեց հայցորդին:

Պատասխան՝ Հայցորդ Անուշ Բարսեղյանը նշեց, որ տեղեկությունների հավաքագրման գործընթացը տևել է 6 ամիս, հարցման համար դիմել ենք 80 հոգու, միայն 60 հոգի են համաձայնել մասնակցել հարցումներին:

Ելույթի համար Ա. Մկրտչյանը ձայնը տվեց նաև գրախոս, դ.գ.թ. Ա. Սահակյանին, ով ներկայացրեց Ֆարմացիայի ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, պաշտոնական կարծիքի նախագիծը:

Ա. Սահակյանը նշեց, որ Անուշ Բարսեղի Բարսեղյանի ատենախոսական աշխատանքը նվիրված է ՀՀ-ում վերին շնչուղիների սուր ռեսպիրատոր վարակների և գլխացավի ախտանիշների ինքնաբուժման իրավիճակի ուսումնասիրմանն ու գնահատմանը և սույն դեպքերում իրականացվող ինքնաբուժման համուղղման և պատշաճ կառավարմանն ուղղված համապատասխան ծրագրերի մշակմանը:

Աշխատանքի գիտական նորույթն այն է, որ ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են ՀՀ բնակչության մոտ վերին շնչուղիների սուր ռեսպիրատոր վարակների և գլխացավի ախտանիշների ինքնաբուժման մակարդակն ու պատճառները: Վերլուծության հիման վրա մշակվել և պիլոտային ծրագրով փորձարկվել է սպառողների համար նախատեսված ուղեցույց՝ պատասխանատու ինքնաբուժում իրականացնելու համար:

Գնահատվել են դեղատան աշխատակիցների գիտելիքները և գործնական հմտությունները՝ վերին շնչուղիների սուր ռեսպիրատոր վարակների և գլխացավի ախտանիշների ինքնաբուժման կառավարման ընթացքում: Նշված արդյունքներով հիմնավորվել է «Դեղագետը պացիենտին. վերին շնչուղիների սուր ռեսպիրատոր վարակների և գլխացավի ախտանիշների ժամանակ» մեթոդական ձեռնարկի մշակման անհրաժեշտությունը՝ նպատակ ունենալով բարելավել դեղատան աշխատակիցների մասնագիտական պատրաստվածությունը և ինքնաբուժման գործընթացի կառավարումը:

Ա. Սահակյանը նշեց, որ ատենախոսության վերաբերյալ առկա են որոշակի դիտողություններ.

1. Ատենախոսական աշխատանքում վերցված են երկու ախտանիշներ՝ վերին շնչուղիների սուր ռեսպիրատոր վարակներ և գլխացավ, որոնցից յուրաքանչյուրը առանձին ուսումնասիրության առարկա կարող էր լինել և միանգամայն կարելի էր բավարարվել դրանցից մեկով: Դա զգալիորեն ծանրացրել է թե շարադրանքը, թե ստացված տվյալների ամփոփումը:

2. Ատենախոսության Նկար 1-ում և Աղյուսակ 1-ում ներկայացված տվյալները մասամբ համընկնում են՝ երկուսն էլ անդրադառնալով մասնակիցների տարիքային ցուցանիշներին:
3. Նկար 13-ում օրդինատների առանցքի վրա ներկայացված թվերը անհրաժեշտ է հստակեցնել՝ տվյալների ամբողջական և ճիշտ մեկնաբանման համար:
4. Հաջորդ հետազոտություններում նպատակահարմար կլինի քրոնիկ հիվանդների ինքնաբուժման գործընթացը դիտարկել նաև քանակական մեթոդով՝ որակական արդյունքները լրացնելու և ավելի համապարփակ պատկեր ստանալու նպատակով:
5. Աշխատանքը զերծ չէ նաև որոշ տպագրական թերություններից ու վրիպակներից:

Ելույթ ունեցողներն առաջարկեցին հաստատել Ֆարմացիայի ինստիտուտի կողմից ներկայացված կարծիքը:

Որոշեցին՝ *(միաձայն)*

1. Հաստատել Լուսինե Գագիկի Նազարյանի «Դեղագործական հոգածության բարելավման հնարավոր ուղիների մշակումը փորլուծության ախտանիշի դեպքում» թեմայով ատենախոսության վերաբերյալ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, պաշտոնական կարծիքը:
2. Անուշ Բարսեղի Բարսեղյանի «Վերին շնչուղիների սուր ռեսպիրատոր վարակների և գլխացավի ախտանիշի ինքնաբուժման համուղղումը դեղատանը» թեմայով ատենախոսության վերաբերյալ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, պաշտոնական կարծիքը:

3. **Ֆարմացիայի ինստիտուտի 2024-2025 ուս. տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվության քննարկման և հաստատման հարցը:**

Լսեցին՝ Գիտխորհրդի նախագահ, ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյանին, ով ներկայացրեց ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների արդյունքները: Նա նշեց, որ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանություններն ընթացել են բարձր մակարդակով սահմանված պահանջներին համապատասխան և հանգիստ մթնոլորտում: Ավարտական աշխատանքների պաշտպանությանը մասնակցել է 41 շրջանավարտ, բողոքարկում չի եղել: Մագիստրոսական թեզերի պաշտպանություններին մասնակցել է 49 շրջանավարտ (12 –ը Դեղերի որակի վերահսկում, իսկ 37-ը՝ Ֆարմացիա կրթական ծրագրերից:

Որոշեցին՝ տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

4. Ընթացիկ հարցեր:

4.1. **Ֆարմացիայի ինստիտուտի կրթական ծրագրերի ղեկավարների հաշվետվությունների քննարկման և հաստատման հարցը:**

Լսեցին՝ «Ֆարմացիա» բակալավրի (առկա ուսուցում) կրթական ծրագրի ղեկավար՝ ք.գ.թ., դոցենտ Հ. Սիմոնյանին և «Դեղագործական քիմիա» բակալավրի (հեռակա ուսուցում) կրթական ծրագրի ղեկավար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Գեոլչանյանին, ովքեր ներկայացրեցին իրենց հաշվետվությունները:

Հ. Սիմոնյանը հաղորդեց այն մասին, որ Կազմվել և հաստատվել է «Ֆարմացիա» բակալավրի կրթական ծրագրի 2025/29 ուսումնական պլանը, որը 2024/28 պլանի համեմատ էական փոփոխությունների չի ենթարկվել:

«Ֆարմացիա» բակալավրի կրթական ծրագիրը 2022 թվականին հավատարմագրման էր ներկայացվել գերմանական ASIIN հավատարմագրող միջազգային կազմակերպությանը և 2024 թվականի հունվար ամսին «Ֆարմացիա» բակալավրի կրթական ծրագիրը ստացել էր միջազգային հավաստագիր մեկ տարի տևողությամբ: Ֆարմացիա բակալավրի կրթական ծրագրի հետագա չորս տարիների միջազգային հավատարմագրման համար հոկտեմբեր ամսին կազմվել է պատասխան զեկույց, պատրաստվել են հավելվածներ և վկայություններ ու ներկայացվել ASIIN գերմանական միջազգային հավատարմգրող կազմակերպությանը: Որից հետո «Ֆարմացիա» բակալավրի կրթական ծրագրի հավատարմագրումը երկարացվել է ևս չորս տարով, մինչև 2029 թվականը:

«Ֆարմացիա» բակալավրի կրթական ծրագիրը 2023-2024 ուս. տարում անցել էր ընթացիկ մշտադիտարկում: Հոկտեմբեր ամսին մշակվել է կրթական ծրագրի բարելավման գործողությունների վերջնական պլանը: Իսկ փետրվար ամսին ներկայացվել է կրթական ծրագրի բարելավման գործողությունների պլանի հաշվետվություն:

Մոդուլացված դասընթացներ՝ «Կենսաբանություն», «Մարդու անատոմիա և նորմալ ֆիզիոլոգիա», «Կենսաքիմիա» և «Մանրէաբանություն», դասավանդող դասախոսների հետ վերանայվել են դասընթացների բովանդակությունը, գնահատման բաղադրիչները և նկարագրիչները: Արդյունքում կազմվել են բոլոր դասընթացների նկարագրիչները և ներառվել կրթական ծրագրի մասնագիր:

Հ. Սիմոնյանը և Ա. Գեոլչանյանը հաղորդեցին նաև, որ տեղի է ունեցել հանդիպում «Հոգեբանության հիմունքներ» կամընտրական դասընթացի դասախոսի հետ, քննարկվել է դասընթացը ընտրած Ֆարմացիայի բակալավրի ուսանողների համար ծրագրում որոշակի փոփոխություններ մտցնելու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով դեղագետ-մասնագետների պացիենտների հետ շփման համար անհրաժեշտ հմտությունների անհրաժեշտությունը:

Ուսումնական տարվա ընթացում տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ «Ֆարմացիա» և «Դեղագործական քիմիա» բակալավրի կրթական ծրագրերի առաջին կուրսի ուսանողների հետ: Սահիկաշարի օգնությամբ ուսանողներին ներկայացվել է ուսումնական ստորաբաժանումը, կրթական ծրագիրը սպասարկող մասնագիտական ամբիոնները, կրթական ծրագիրը, ինչպես նաև ֆարմացիա մասնագիտությանը վերաբերող մանրամասները և ընտրված մասնագիտությամբ կարիերայի զարգացման հեռանկարները: Ֆարմացիայի ինստիտուտի գրասենյակի աշխատակիցների հետ միասին ուսանողներին ներկայացվել է ուսումնական գործընթացում թվային գործիքների օգտագործման կարգը և դրանց անհրաժեշտությունը, հետադարձ կապի գործիքները, ինչպես նաև ֆինանսական աջակցության ծրագրերը: Ներկայացվել է նաև ուսանողների հետազոտական ծրագրերում ընդգրկվելու հնարավորությունները:

Ուսանողները ծանոթացել են կրթական ծրագրերի առարկայացանկին, քննական ձևերին և գնահատման նոր համակարգին:

Որոշեցին՝ բաց քվեարկությամբ (միաձայն) հաստատել «Ֆարմացիա» բակալավրի (առկա ուսուցում) կրթական ծրագրի ղեկավար՝ ք.գ.թ., դոցենտ Հ. Սիմոնյանի և

«Դեղագործական քիմիա» բակալավրի (հեռակա ուսուցում) կրթական ծրագրի ղեկավար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Գեոլչանյանի հաշվետվությունները:

Լսեցին՝ «Ֆարմացիա» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանը և «Դեղերի որակի վերահսկում» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավար՝ ք.գ.թ., դոցենտ Հ. Սիմոնյանը, ովքեր ներկայացրեցին իրենց հաշվետվությունները:

Հ. Սիմոնյանը հաղորդեց այն մասին, որ կազմվել և հաստատվել է «Դեղերի որակի վերահսկում» մագիստրոսի կրթական ծրագրի 2025/26 ուսումնական պլանը, որը 2024/25 պլանի համեմատ էական փոփոխությունների չի ենթարկվել:

«Դեղերի որակի հսկում և ՊԱԳ հիմունքներ» մոդուլացված դասընթացի դասախոսների հետ վերանայվել է դասընթացի բովանդակության, գնահատման բաղադրիչները և նկարագրիչը: Արդյունքում կազմվել է դասընթացի նկարագրիչը և ներառվել կրթական ծրագրի մասնագիր: Մի շարք հանդիպումներ են տեղի ունեցել «Դեղերի որակի վերահսկում» մագիստրոսի կրթական ծրագրի ուսանողների հետ, որոնց ընթացքում նրանց ներկայացվել է կրթական գործընթացը, «Դեղերի որակի վերահսկում» մագիստրոսի կրթական ծրագրի ուսումնական պլանը, դասընթացների քննական ձևերը և այլն: Ներկայացվել են մագիստրոսական թեզերի ղեկավարների գիտական ուղղությունները, ղեկավարների կոնտակտները, ինչպես նաև թեզերի կատարման ընթացակարգը, ինչպես նաև 2-րդ կիսամյակում նախատեսված կամընտրական դասընթացների նկարագրիչները, քննարկվել է կամընտրական դասընթացների ընտրության ընթացակարգը:

Ա. Հովհաննիսյանը հաղորդեց այն մասին, որ կազմվել և հաստատվել է «Ֆարմացիա» մագիստրոսի կրթական ծրագրի 2025/26 ուսումնական պլանը, որը 2024/25 պլանի համեմատ էական փոփոխությունների չի ենթարկվել: Նա հաղորդեց նաև, որ «Ֆարմացիա» մագիստրոսի կրթական ծրագիրը 2022 թվականին հավատարմագրման էր ներկայացվել գերմանական ASIIN հավատարմագրող միջազգային կազմակերպությանը և 2024 թվականի հունվար ամսին ստացել էր միջազգային հավաստագիր մեկ տարի տևողությամբ: Ֆարմացիա մագիստրոսի կրթական ծրագրի հետագա չորս տարիների միջազգային հավատարմագրման համար հոկտեմբեր ամսին կազմվել է պատասխան զեկույց, պատրաստվել են հավելվածներ և վկայություններ ու ներկայացվել ASIIN գերմանական միջազգային հավատարմգրող կազմակերպությանը: Արդյունքում «Ֆարմացիա» մագիստրոսի կրթական ծրագրի հավատարմագրումը երկարացվել է ևս չորս տարով՝ մինչև 2029 թվականը:

Ա. Հովհաննիսյանը և Հ. Սիմոնյանը հավելեցին նաև, որ 2024-2025 ուսումնական տարում «Ֆարմացիա» մասնագիտությամբ մագիստրատուրայում ուսանել են և ավարտել 37, իսկ «Դեղերի որակի վերահսկում» կրթական ծրագրի մագիստրատուրայում՝ 12 ուսանող, որոնք բոլորը հաջողությամբ պաշտպանել են իրենց մագիստրոսական թեզերը: Դասավանդողների կազմում փոփոխություններ չեն եղել, ընդհանուր առմամբ ուսանողների կողմից դասավանդումը գնահատված է լավ:

Ուսումնական տարվա ընթացում տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ «Ֆարմացիա» և «Դեղերի որակի վերահսկում» մագիստրոսի կրթական ծրագրերի

ուսանողների հետ՝ կրթական ծրագրի առարկայացանկին, քննական ձևերին և գնահատման նոր համակարգին ծանոթացնելու նպատակով:

Որոշեցին՝ բաց քվեարկությամբ (միաձայն) հաստատել «Ֆարմացիա» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանի և «Դեղերի որակի վերահսկում» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավար՝ ք.գ.թ., դոցենտ Հ. Սիմոնյանի հաշվետվությունները:

Գիտական խորհրդի նախագահ՝

ք.գ.թ., դոցենտ **Ա. Մկրտչյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝

ք.գ.թ. , դոցենտ **Ա. Դաղայան**